ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1963 Общественные науки

Ռ. Պ. Կոնդակչյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Իմպերիալիստական ռազմական խմբավորումների մասնակից երկրների ռազմականացման տնտեսական ու ֆինանսական հետևանքների ուսումնասիրությունը կարևոր խնդիր է։ Ռազմական ծախսերը կազմում են այդ երկրների պետական բյուջեի զգալի մասը։ Ռազմականացման քաղաքականությունը տնտեսական ու ֆինանսական ծանր հետևանքներ է ունենում հատկապես թույլ զարգացած երկրների էկոնոմիկայի ու ֆինանսների համար, քանի որ այս երկրներում կապիտալիստական արտադրաեղանակը դեռ չի ձևավորվել որպես լրիվ մասնավոր-ձեռնարկատիրական, և արդյունաբերության համախառն արտադրանքի զգալի մասը տալիս է բուրժուա-կալվածատիրական պետության սեփականությունը կազմող արդյունաբերությունը, որի ֆինանսավորումը տեղի է ունենում պետական բյուջեի հաշվին[1]։ Իսկ ռազմական մեծ ծախսերի պատճառով պետական-կապիտալիստական արդյունաբերությունը զրկվում է ընդլայնված վերարտադրության զարգացման համար անհրաժեշտ ծախսերից։ Այնուհետև, այս երկրներում ազգային մասնավոր կապիտալը այնքան ուժեղ չէ, որ հնարավորություն ունենա միայն իր հաշվին ընդլայնելու վերարտադրությունը՝ չօգտվելով պետության օժանդակությունից։ Այսպիսով, ռազմական մեծ ծախսերը կլանում են այն միջոցները, որոնք կարող էին օգտագործվել թե՛ պետական-կապիտալիստական և թե՛ մասնավոր ձեռնարկությունների ընդլայնված վերարտադրության համար։

Սույն հոդվածի նպատակն է փաստական նյութի հիման վրա լուսաբանել Թուրքիայի ռազմականացման հիմնական հետևանքները երկրի տնտեսական ու ֆինանսական վիճակի համար։

* * *

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարող շրջանները, հանդես գալով ՍՍՌՄ-ի ու սոցիալիստական մյուս երկրների դեմ պատերազմ հրահրելու պլաններով, առաջնահերթ նշանակություն են տալիս ՍՍՌՄ-ին հարևան երկրների ռազմականացմանը ու նրանց տերիտորիաներում իրենց ռազմական բազաների շինարարությանը։ Պատահական չէ, որ ԱՄՆ-ը պատերազմից հետո իր արտաքին ագրեսիվ քաղաքականության ոլորտի մեջ առաջին հերթին, ընդգրկեց այնպիսի երկրի, ինչպիսին է Թուրքիան։ «Տրումենի դոկտրինայի» համաձայն վերջինիս վրա տարածելով իր ռազմական «օգնությունը», ԱՄՆ-ը ձգտում է այն վերածել իր ռազմա-քաղաքական պլացդարմի՝ ուղղը-

---

[1] *Տվյալ դեպքում Թուրքիայում, պետական-կապիտալիստական արդյունաբերության արտադրանքը կազմում է արդյունաբերության ամբողջ համախառն արտադրանքի մոտ կեսը։*

ված ինչպես սոցիալիզմի համաշխարհային սիստեմի, այնպես էլ արաբական ժողովուրդների ազգային անկախության դեմ։ Թուրքիայի վրա տարածված ամերիկյան «օգնության» նպատակները համապատասխանում էին նաև թուրքական ռեակցիայի ներքին և արտաքին քաղաքական ձգտումներին։

Թուրքիային տրամադրված ամերիկյան ռազմական «օգնության» գումարի մասին տարբեր աղբյուրներ տալիս են տարբեր տվյալներ։ Այսպես, օրինակ, համաձայն թուրք տնտեսագետ Արալի տվյալների, մինչև 1958 թ. մարտը Թուրքիան ԱՄՆ-ից ստացել էր 1,7 մլրդ. դոլար (4760 մլն. թուրքական լիրա) ռազմական «օգնություն»[2]։ Իսկ Թուրքիայում ամերիկյան նախկին դեսպան Ֆ. Ուորենի հայտարարության համաձայն, 1948—1960 թթ. ընթացքում ԱՄՆ-ն Թուրքիային տրամադրել էր 1.878.300 հազ. դոլար (5.259.240 հազ. թ. լ.) ռազմական «օգնություն»[3]։ Եթե դրան ավելացնենք նաև «Տրումենի դոկտրինայով» Թուրքիային տրամադրված 100 մլն. դոլար ռազմական «օգնությունը», ապա կստացվի, որ 1947—1960 թթ. ընթացքում ԱՄՆ-ը Թուրքիային տրամադրել է 1.978.300 հազ. դոլար ռազմական «օգնություն»։ 1948 թվականից՝ «Մարշալի պլանի» համաձայն ԱՄՆ-ը սկսեց Թուրքիային տրամադրել նաև տնտեսական, իսկ այնուհետև նաև՝ տեխնիկական և ուրիշ «օգնություն», որը մինչև 1960 թ., վերոհիշյալ Ֆ. Ուորենի տվյալներով, կազմել է 1.270.140 հազ. դոլար։ Այսպիսով, 1947—1960 թթ. ընթացքում ամերիկյան ընդհանուր «օգնությունը» Թուրքիային կազմել է 3.248.740 հազ. դոլար (7.095.552 հազ. թ. լ.)։

Թուրքիան ստացել է նաև զանազան կարգի «օգնություն» Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկից, Արտահանման-ներմուծման բանկից և Միջազգային վալյուտային ֆոնդից[4], որի գումարը մինչև 1960 թվականը կազմել էր 152,7 մլն. դոլար (427,60 մլն. թ. լ.)։ Ընդհանուր առմամբ վերցրած, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մինչև 1960 թվականը ընկած ժամանակաշրջանը, Թուրքիային տրամադրված օտարերկրյա ամբողջ «օգնության» գումարը, մեր հաշվումների համաձայն, կազմում է մոտ 10 մլրդ. թ. լ.։

Առաջին հայացքից թվում է, թե ԱՄՆ-ը ու նրանց ենթակա միջազգային ֆինանսական կազմակերպությունները Թուրքիային տրամադրել են բավականաչափ լայն տնտեսական, տեխնիկական և այլ «օգնություն», սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ «օգնության» մոտավորապես կեսը ծախսվել է ճանապարհների, նավահանգիստների և ուրիշ ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող օբյեկտների շինարարության նպատակով։ Այդ իսկ պատճառով, Թուրքիային տրամադրված ամերիկյան ռազմական «օգնության» գումարի հաշվարկման ժամանակ անհրաժեշտ է ավելացնել նաև այն գումարները, որոնք ձևական տեսակետից տրամադրված են տնտեսական և տեխնիկական «օգնության» գծով, բայց փաստորեն ծախսվել են ռազմական նպատակների համար։

Իրենց հերթին թուրքական կառավարողները մեծ գումարներ են հատկացնում երկրի ռազմականացման համար։ Թուրքական պաշտոնական տվյալ-

---

[2] „Yeni gun", 1958, 8 mart.

[3] „Akşam", 1960, 25 agustos.

[4] Վերոհիշյալ միջազգային ֆինանսական կազմակերպությունները գտնվում են ամերիկյան մոնոպոլիաների ազդեցության տակ ու վարում են նրանց շահերին համապատասխանող քաղաքականություն։

ների համաձայն 1946—1960 թթ. ընթացքում ուղղակի ռազմական ծախսերը կազմեցին 11.283 մլն. թ. լ.[5]։ Բայց Թուրքիայի ռազմական ծախսերը չեն սահմանափակվում միայն ուղղակի՝ ազգային պաշտպանության մինիստրության գծով կատարվող ծախսերով։ Դրանց մեջ են մտնում նաև ծախսերը օժանդակ զինված ուժերի համար (պետական անվտանգության օրգաններ, ժանդարմերիա, ոստիկանություն), անուղղակի ռազմական ծախսերը (պետական պարտքերի մարում, որոնց գումարը աճում է ռազմական ծախսերի պատճառով, կենսաթոշակ նախկին զինվորականներին ու նրանց ընտանիքներին) ավելի քան 5,5 մլրդ. թ. լ. և, վերջապես, թաքնված ռազմական ծախսերը (ավտոճանապարհների ու երկաթուղագծերի, նավահանգիստների ու օդանավակայանների շինարարություն, որոնք ունեն ռազմական նշանակություն, բայց կառուցվում են այլ մինիստրությունների գծով)՝ մոտ 8,2 մլրդ. թ. լ.։ Այսպիսով, ուղղակի ռազմական ծախսերի վրա ավելացնելով նաև մյուս ռազմական ծախսերը, ստացվում է, որ 1946—1960 թթ. ընթացքում ռազմական ընդհանուր ծախսերը կազմեցին մոտ 25 մլրդ. թ. լ. կամ պետական բյուջեի մոտ 60%-ը։

Վերոհիշյալ թվերը պերճախոս կերպով վկայում են այն մասին, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում Թուրքիայի ռազմական ծախսերը կլանում էին նրա պետական բյուջեի մի զգալի մասը։ Այնուհետև, այդ թվերը խոսում են այն մասին, որ Թուրքիայի ընդհանուր ռազմական ծախսերը մոտ 2,5 անգամ գերազանցում են նրան տրամադրված ամերիկյան և օտարերկրյա մյուս «օգնության» բոլոր գումարներից։ Այդ ծախսերը մոտ 1,5 անգամ գերազանցում են արտադրության խաղաղ ճյուղերի, կրթության, առողջապահության ու սոցիալական ապահովագրման համար կատարվող ծախսերից։ Այդ թվերը ցույց են տալիս նաև, որ թուրքական կառավարողները երկրի ռազմականացման հիմնական բեռը բարդել են թուրքական աշխատավոր մասսաների վրա, քանի որ նրանցից գանձվող ուղղակի և անուղղակի հարկերը կազմում են պետական եկամուտների զգալի մասը։

Թուրքիայի ռազմական ծախսերը աճեցին հատկապես Դեմոկրատական պարտիայի՝ խոշոր բուրժուազիայի, կալվածատերերի ու մոլի ռազմամոլների պարտիայի 1950 թվականի մայիսին իշխանության գլուխ անցնելուց և երկրի ՆԱՏՕ-ի մեջ (1952 թվականի փետրվարի 18) մտնելուց հետո։

Թուրքիայի ռազմականացման տնտեսական ու ֆինանսական հետևանքների հարցը ուսումնասիրելիս, հարկավոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ երկրի տնտեսությունը և ֆինանսները դեռ չէին կազդուրվել երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում կատարված ռազմական մեծ ծախսերի ծանր հետևանքներից, երբ թուրքական կառավարողները բևեռեցին ռազմականացման քաղաքականության նոր և ավելի ծանր փուլը։

Ռազմականացման քաղաքականությունը հանգեցրեց Թուրքիայի վերածմանը ամերիկյան ռազմաստրատեգիական պլացդարմի Մերձավոր ու Միջին արևելքում. այն ծանր հետևանքներ թողեց երկրի տնտեսական ու ֆինանսական վիճակի վրա։

Ռազմական մեծ ծախսերը հանդիսացան պետական բյուջեի ծախսային մասի ուռճացման գլխավոր պատճառը։ Այսպես, օրինակ, եթե 1950 թվականին Թուրքիայի պետական բյուջեի ծախսային մասը կազմում էր 1. 423 մլն.

[5] „Zafer", 1960. 20 şubat.

թ. լ., ապա 1960—1961 ֆինանսական տարում[6] այն արդեն կազմեց 7,2 մլն. թ. լ.՝ հինգ անգամ ավելի, քան 1950 թվականին։ Պետական բյուջեի ծախսային մասի ուռճացումը հանգեցրեց նրա պակասորդին (դեֆիցիտ)։ 1955—56 ֆինանսական տարում այն կազմեց 547 մլն. թ. լ. կամ 16 անգամ ավելի, քան 1950 թվականին։

Դեմոկրատական պարտիայի կառավարման ամբողջ ժամանակաշրջանում Թուրքիայի պետական բյուջեն ուներ մշտական պակասորդ, որի գումարը կազմեց 2141 մլն. թ. լ.[7]։

Ռազմական ծախսերը հանգեցրին նաև ներքին և արտաքին պետական պարտքերի աճին, որովհետև ռազմականացման ծախսերը հայթայթելու համար Դեմոկրատական պարտիայի պարագլուխները՝ Բայարը և Մենդերեսը մշտապես դիմում էին ներքին ու արտաքին փոխառությունների և այլ միջոցների, ըստ որում Մենդերեսի կառավարությունը կեղծում էր նրանց մասին տվյալները։ Այսպես, օրինակ, 1959 թվականի դեկտեմբերին ֆինանսների մինիստր Հ. Փոլաթքանը հայտարարեց, որ առ 31-ը հոկտեմբերի ներքին և արտաքին պետական պարտքերը կազմել են 7925 մլն. թ. լ.։ Միայն 1960 թվականի մայիսի 27-ին տեղի ունեցած զինվորական հեղաշրջումից հետո հայտնի դարձավ, որ պետական պարտքերի մասին նախկին կառավարության տվյալներից ոչ մեկը չի համապատասխանում իրականությանը։ Նոր՝ Գյուրսելի կառավարության ֆինանսների մինիստր Է. Ալիջանի տվյալների համաձայն, ըստ 27-ը մայիսի 1960 թվականի դրության, երկրի միայն արտաքին պետական պարտքերի գումարը կազմում էր 12191 մլն. թ. լ. 1950 թվականի 775 մլն. թ. լ. դիմաց[8]։ 1960 թ. արտաքին պետական պարտքերը մոտ 15 անգամ և ներքին պարտքերը՝ մոտ 4 անգամ ավելի էին, քան 1950 թվականին։ Գյուրսելի կառավարության անդամներից մեկի՝ Շ. Իսանի հաշվումների համաձայն, 1960—1965 թթ. ընթացքում Թուրքիան արտաքին պետական պարտքերը մարելու համար ամեն տարի առնվազն պետք է հատկացնի 1 մլրդ. թ. լ. կամ 1960—1961 ֆինանսական տարվա բյուջեի ծախսային մասի մոտ 15%-ը։ Այդ նույն մինիստրի հաշվումների համաձայն, պետական պարտքերի մարումը կտևի մինչև 2008 թվականը. այդ պարտքերը 25 անգամ գերազանցում են երկրի ոսկու և վալյուտայի պաշարը։ Վերոհիշյալ փաստերը ակնհայտ կերպով խոսում են այն մասին, թե Մենդերեսի կառավարության ռազմականացման քաղաքականությունը երկրին ներքին ու արտաքին պետական պարտքերի ինչպիսի ճահճուտի մեջ ընկղմեց։ Բայց այդ նույն թվերը վկայում են նաև այն մասին, որ եթե 1950 թվականին ներքին պետական պարտքը ավելի քան երկու անգամ ավելի էր, քան արտաքին պետական պարտքը, ապա Մենդերեսի կառավարության ժամանակաշրջանում տեղի ունեցավ հակառակ պրոցեսը՝ արտաքին պետական պարտքը մոտ երկու անգամ գերազանցեց առաջինին։ Արտաքին պետական պարտքի սաստիկ ներքինի նկատմամբ հանգեցրեց Թուրքիայի ֆինանսական կախվածության էլ ավելի ուժեղացմանը արևմուտքի երկրներից։ Փաստորեն Թուրքիայի պետական պարտքերը դարձել են չմարվող պարտքեր, որոնք դեռ երկար

---

6 Թուրքիայում ֆինանսական տարին սկսվում է մարտի 1-ին և վերջանում հաջորդ տարվա փետրվարի վերջին։

7 „Ulus", 1960, 18 haziran.

8 „Ulus", 1960, 18 haziran.

9 „Ulus", 1960, 22 haziran.

ժամանակ իրենց բացասական ազդեցությունը կունենան երկրի տնտեսության ու ֆինանսների վրա։ «Դեմոկրատների (այսինքն դեմոկրատական պարտիայի—Ռ. Կ.) կառավարման 10 տարիների ընթացքում Թուրքիան այնպիսի պարտքերի մեջ խրվեց, որոնք գերազանցում էին Օսմանյան կայսրության պարտքերը նրա ամբողջ պատմության ընթացքում»—գրում էր «Մոնդ» թերթը[10]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Թուրքիան կրում էր նաև արտաքին առևտրական դժվարություններ, որոնք հետևանք էին արևմտյան երկրների հետ ոչ-հավասարարժեք ու միակողմանի առևտրի, որը իր հերթին հետևանք էր Թուրքիայի ռազմականացման ու դեպի արևմտյան երկրներ կողմնորոշմանը։ Այդ ժամանակաշրջանում Թուրքիայի արտաքին առևտուրը ուներ մշտական պակասորդ, որը կազմեց 3096 մլն. թ. լ.։ Արտաքին առևտրի պակասորդը առավելագույն չափի հասավ 1952 և 1955 թվականներին, երբ վերջինս համապատասխանորեն կազմեց 540,6 և 515 մլն. թ. լ.[11], իսկ մնացած տարիներին այն տատանվում էր 145-ից մինչև 401 մլն. թ. լ.[12]։ Այսպիսով, Թուրքիան ընկավ նաև արտաքին առևտրական ծանր կախվածության մեջ արևմտյան երկրներից ու իրենից ներկայացնում էր նրանց ապրանքների վաճառահանման մի հարմար շուկա։ Ոչ-հավասարարժեք առևտուրը Թուրքիայի հետ արևմտյան երկրների ու առաջին հերթին ԱՄՆ-ի մոնոպոլիաների համար հանդիսանում էր երկրի բնական հարստությունների ու ժողովրդական մասսաների թալանման միջոց։ Արտաքին առևտրի մշտական պակասորդը հասցրեց Թուրքիայի ունեցած օտարերկրյա վալյուտայի պաշարի նվազեցմանը, որի պատճառով վերջինս հնարավորություն չէր ունենում նորմալ վիճակի մեջ պահել իր արտաքին-առևտրական գործառնությունները։ Ստեղծվել էր այնպիսի մի անելանելի դրություն, որ Թուրքիայի արևմտյան գործակիցները, իրենց վաճառած ապրանքների դիմաց, պահանջում էին կանխիկ գումար, քանի որ հույս չունեին, որ այն կկարողանա ժամանակին վճարել ներմուծված ապրանքների արժեքը։ Այդպիսի քայլի դիմեցին ԱՄՆ-ի ու Անգլիայի նավթային մոնոպոլիաները, որոնք հրաժարվում էին նավթ բեռնաթափելուց, մինչև որ չստանան դրա արժեքը կայուն վալյուտայով[13]։ Թուրքիան սկսեց վայելել անվճարունակ երկրի համբավ։ Արտաքին առևտրի մշտական պակասորդը ևս ազդեց երկրի տնտեսական ու ֆինանսական վիճակի վրա։

Արտաքին առևտրի ոչ-հավասարարժեք բնույթը և Թուրքիայի մյուս տնտեսական ու ֆինանսական դժվարությունները պակասեցրին պետական ոսկու պաշարը։ Այսպես օրինակ, եթե 1950 թվականին Թուրքիայի պետական ոսկու պաշարը կազմում էր 138 տոննա[14], ապա 1960 թվականին այն իջավ մինչև 118 տոննայի, որից, պաշտոնական տվյալների համաձայն, 102 տոննան վերցված էր կալանքի տակ արտասահմանյան բանկերի կողմից վերջինին տրամադրված կարճաժամկետ վարկերի ու փոխառությունների դիմաց[15]։ Ստացվում է, որ դեմոկրատական պարտիայի կառավարման ժամանակաշրջանում ոսկու պաշարը կրճատվեց 20 տոննայով, իսկ պետության տրամադրության տակ

[10] „Monde", 1960, 3 août.
[11] „Ulus", 1960, 16 kasim.
[12] „Three Monthly economic review Turkey", annual supplement, London, 1960, p. 8.
[13] „New York Times Magazin". 1957, 17 november.
[14] „БИКИ". М., 1953 г., № 72, стр. 1.
[15] „Ulus", 1960, 18 haziran.

մնացել էր ընդամենը 16 տոննա։ Միայն տոկոսները այն վարկերի ու փոխառությունների, որ Թուրքիան ստացել էր արտասահմանյան բանկերում պարտագրված ոսկու դիմաց, տարեկան կազմում են 4,5 մլն. դոլար[16]։ Եթե երբևիցե թուրքական կառավարողները որոշեն մարել պետական բյուջեի ու արտաքին առևտրի պակասորդները, ինչպես նաև ներքին և արտաքին պետական պարտքերը, ապա նրանք կզրկվեն նաև պետական ոսկու աղատ մնացած պաշարից։ Պետական ոսկու պաշարի կրճատումը իր հերթին աջակցեց Թուրքիայի ֆինանսական դրության վատթարացմանը ու ԱՄՆ-ից և արևմտյան մյուս երկրներից նրա կախվածության ուժեղացմանը։

Մենդերեսի կառավարությունը հաճախ էր դիմում թղթադրամի բաց թողմանը։ 1950—60 թթ. ընթացքում լինում էին այնպիսի ժամանակաշրջաններ, երբ թղթադրամի քանակը շրջանառության մեջ մեկ շաբաթվա ընթացքում ավելանում էր ավելի քան 200 մլն. թ. լ. չափով։ Թղթադրամի մասսայի ավելացումը շրջանառության մեջ հանգեցրեց լիրայի արժեքազրկմանը, հետևաբար՝ ֆինանսների կազմալուծմանը։ Դեռևս 1946 թվականին սահմանվել էր լիրայի արժեքի նոր կուրսը դոլարի համեմատությամբ, այն է՝ 2,8 լիրան=1 դոլարի։ Չնայած թուրքական կառավարողների ջանքերին պահպանել լիրայի պաշտոնական արժեքը, այն այնուամենայնիվ շարունակում էր ընկնել։ Այսպես, 1950 թվականին դոլարը «սև շուկայում» գնվում էր 4 լիրայով, որը ավելի քան 30% բարձր էր, քան նրա պաշտոնական արժեքը։ Լիրայի արժեքը շարունակում էր ընկնել նաև հետագա տարիների ընթացքում։ 1958 թվականին մեկ դոլարը «սև շուկայում» արդեն գնվում էր 10—13 լիրայով։ Այդ նույն թվականի ամռանը լիրայի արժեքը նորից իջեցվեց դոլարի համեմատությամբ՝ 1 դոլարը հավասարվեց 9,2 լիրայի։ Այսպիսով, լիրայի արժեքը դոլարի համեմատությամբ իջեցվեց ավելի քան երեք անգամ։ Բայց հարկավոր է նկատի ունենալ, որ հենց այդ ժամանակ էլ լիրայի պաշտոնական արժեքը չէր համապատասխանում նրա շուկայական արժեքին։ Քանի որ Մենդերեսի կառավարությունը նախկին տեմպերով շարունակում էր նոր թղթադրամների բաց թողումը, լիրայի արժեքն էլ համապատասխանորեն ընկնում էր, «սև շուկայում» հասնելով 13—15 լիրայի՝ մեկ դոլարի դիմաց. այդ իսկ պատճառով դրամի արժեքազրկումը սկսեց ընդունել աղետային բնույթ։ Լիրայի պաշտոնական կուրսի իջեցումը դոլարի համեմատությամբ իմպերիալիստական մոնոպոլիաներին հնարավորություն տվեց ավելի էժան գներով գնել թուրքական գյուղատնտեսական հումքը և հանքային հանածոները և բարձր գներով վաճառել իրենց ապրանքները թուրքական շուկայում։ Պետք է հատկապես նշել, որ լիրայի կուրսի իջեցումը վաղուց էր պահանջվում ՆԱՏՕ-ի գծով Թուրքիայի «դաշնակիցների» կողմից, որը և բավարարվեց Մենդերեսի կառավարության կողմից։ Լիրայի արժեքազրկումը ևս աջակցեց բյուջեի ծախսային մասի ուռճացմանը, նրա պակասորդի ու պետական պարտքերի, հատկապես պետական արտաքին պարտքերի ավելացմանը։ Դրամի արժեքազրկումը, հանդիսանալով երկրի ռազմականացման քաղաքականության անմիջական հետևանքներից մեկը, այնուհետև ինքը դարձավ տնտեսական ու ֆինանսական լուրջ դժվարությունների պատճառներից մեկը։

[16] Նույն տեղում։

Ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, թղթադրամի բաց թողնելը «հանդիսանում է ֆինանսական խառնաշփոթության գլխավոր չարիքը»[17]։

Բնութագրելով Թուրքիայի տնտեսական ու ֆինանսական վիճակը, «Լա տրիբյուն դե նասյոն» թերթը գրում էր, որ «տնտեսական ճգնաժամը սկսում էր ընդունել աղգային աղետի բնույթ։ Արդյունաբերությունը աշխատում էր դանդաղ, գյուղատնտեսությունն անկում էր ապրում պարարտանյութերի ու մեքենաների պակասության պատճառով, արտաքին առևտրի պակասորդը ավելանում էր, իսկ ներմուծումը՝ կրճատվում, մի կողմից վալյուտայով աղքատ կառավարության պատճառով, իսկ մյուս կողմից՝ օտարերկրյա մատակարարողների, որոնց զգվեցրին չվճարվող հաշիվները»[18]։ Իսկ «Մոնդ» թերթը գրում էր, որ «Վերջին 10 տարիների ընթացքում երկրի էկոնոմիկան, առանց որևիցե ժամանակամիջոցի, ինֆլյացիայից անցնում էր անկման»[19]։

Դրամի արժեքաղրկման անմիջական հետևանքներից մեկը առաջին անհրաժեշտության ապրանքների գների մշտական բարձրացումն էր։ Թուրքական պաշտոնական տվյալների համաձայն, 1957 թվականին, նախապատերազմյան 1938 թվականի համեմատությամբ, հացի գինը բարձրացել էր 5 անգամ, մսի, կաթի ու շաքարի գինը՝ 9 անգամ, կարտոֆիլինը՝ 11, ձիթապտղինը՝ 15, կարագի և ձիթայուղի գները՝ 16, թարմ բանջարեղենինը՝ 17, լոբու գինը՝ քսան անգամ[20]։ Եթե մենք համեմատելու լինենք մթերային և առաջին անհրաժեշտության մյուս ապրանքների 1958 և 1959 թվականների գները 1950 թվականի գների հետ, ապա կստացվի, որ դրանք համապատասխանորեն բարձրացել են 2 և 3 անգամ[21]։ Ճիշտ է, նախապատերազմյան տարիների համեմատությամբ բանվորների աշխատավարձը ընդհանուր առմամբ բարձրացավ 1—2 անգամ և կազմեց ամսական 100—250 թ. լ. բայց քանի որ առաջին անհրաժեշտության ապրանքների գների աճը ավելի էր, քան բանվորների նոմինալ աշխատավարձի աճը, ուստի նրանց ռեալ աշխատավարձը ոչ թե բարձրացավ, այլ ընդհակառակը՝ իջավ։ Ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, թղթադրամ բաց թողնելը «ամենից ավելի վատթարացնում է հենց բանվորների, բնակչության ամենաչքավոր մասի դրությունը[22]։

1950—1960 թթ. ընթացքում տեղի էր ունենում նաև խմելու ջրի, օճառի, էլեկտրականության, գազի, վառելափայտի, ածխի, թերթերի, կապի ու տրանսպորտի միջոցների գների մշտական բարձրացում։

Ավելացավ նաև բնակարանային վարձը՝ ավելի քան չորս անգամ նախապատերազմյանի համեմատությամբ։ Այն կազմում էր բանվորների ամսական աշխատավարձի մոտ մեկ երրորդը։ Այն ժամանակ, երբ բարձր վարձի պատճառով, բազմաթիվ բնակելի շենքեր մնում էին դատարկ, հարյուրավոր բանվորական ընտանիքներ ապրում են դեջեկոնդուներում[23]։ Պաշտոնական տվյալների համաձայն, միայն Անկարայում կան այդպիսի 45850 հյուղակներ, ուր ապրում

---

17 Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հ. 25, էջ 452։

18 „La tribune des nations", 1958, 5 septembre.

19 „Monde", 1960, 3 août.

20 „Dünya", 1957, 20 ekim.

21 „Ulüs", 1958, 16 agustos; 1959, 1 eylül.

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 452։

23 Այսինքն տարբեր շինանյութերի անպետք մնացուկներից մի գիշերվա ընթացքում սարքված հյուղակներ։ Ռ., Կ.։

է 222275 մարդ, կամ քաղաքի ազգաբնակչության մոտ կեսը[24]։ Աշխատավոր մասսաների նյութական վիճակի վատթարացման մասին է վկայում նաև նրանց բաժինը ազգային եկամտի մեջ։ Այսպես, օրինակ, 1958 թվականին 536 հազար արդյունաբերական բանվորների բաժինը ազգային եկամտի մեջ կազմեց նրա մեկ քառորդը։ Այս թվերից երևում է, որ մեկ բանվորի տարեկան եկամուտը կազմում էր 3500 թ. լ. քիչ ավելի, այն դեպքում, երբ երեք-չորս հոգուց բաղկացած մի ընտանիքի ապրուստի պաշտոնական մինիմումը ամսական կազմում էր 2000—2500 թ. լ.[25]։ Այս թվերից հետևում է նաև, որ մեկ բանվորի ամսական աշխատավարձը յոթ-ութ անգամ ցածր էր ապրուստի ամսական պաշտոնական մինիմումից։

Լիրայի արժեքազրկման, առաջին անհրաժեշտության ապրանքների գների ու բնակարանային վարձի բարձրացման հետևանքը եղավ ապրուստի մշտական թանկացումը։ Համաձայն Թուրքիայի վիճակագրական գլխավոր վարչության տվյալների, 1958 թվականին ապրուստի արժեքը Ստամբուլում աճել էր 652%-ով՝ 1938 թվականի համեմատությամբ[26]։

1960 թվականի սկզբներին ապրուստի թանկությամբ Թուրքիան գրավեց Բրազիլիայից հետո երկրորդ տեղը՝ կապիտալիստական աշխարհում (ինչպես այդ հայտնի դարձավ ՄԱԿ-ի տվյալներից)[27]։ Այդ նույն ժամանակ, անկախ իրերի իսկական վիճակից, Մենդերեսի կառավարության մինիստրներից մեկը՝ Սամետ Աղաօղլուն հայտարարում էր, թե Թուրքիայում ապրուստի թանկություն չկա[28]։

1959 թվականի մարտին Մենդերեսի կառավարությունը որոշում ընդունեց արդյունաբերության մի շարք ճյուղերում աշխատող բանվորների աշխատավարձը ավելացնելու մասին։ Այդ որոշման համաձայն, ռազմական արդյունաբերության ու պետական մոնոպոլիաների բանվորների աշխատավարձը ավելացավ 20%-ով, մեքենաշինական ու քիմիական արդյունաբերության բանվորներինը՝ 25—30%-ով, շաքարի արդյունաբերության՝ 30—40%-ով, երկաթուղային տրանսպորտի՝ 25—30%-ով և պետական ձեռնարկությունների՝ 20—40%-ով։ Այս որոշումը չտարածվեց այն հազարավոր բանվորների վրա, որոնք աշխատում էին արդյունաբերության մյուս ճյուղերում և մասնավոր ձեռնարկություններում։ Այս որոշումը որոշ չափով կարող էր թեթևացնել աշխատավորների նյութական ծանր վիճակը, եթե չշարունակվեր առաջին անհրաժեշտության ապրանքների գների աճը։ Բայց որովհետև այդ տեղի չունեցավ, այդ իսկ պատճառով բանվորները մնացին նույն վիճակում։

Եթե ռազմականացման քաղաքականությունը ծանր տնտեսական ու ֆինանսական հետևանքներ թողեց երկրի ու աշխատավոր մասսաների նյութական վիճակի վրա, ապա այն մյուս կողմից հանգեցրեց շահագործող դասակարգերի՝ գործարանատերերի, ֆաբրիկանտների, բանկիրների, կալվածատերերի ու կուլակների հարստացմանը, որովհետև դրամի արժեքազրկումն ու ա-

---

[24] „Ulus", 1958, 16 ocak.

[25] «Проблемы мира и социализма», № 8, 1960, стр. 42.

[26] „Vatan", 1959, 19 agustos.

[27] „Cumhuriyet". 1960, 12 ocak.

[28] „Ulus", 1957, 16 şubat.

ռաջին անհրաժեշտության և մյուս ապրանքների գների աճը նպաստավոր պայմաններ ստեղծեցին դրա համար։

Այսպես, օրինակ, շահագործող դասակարգերի հարստացման մասին պատկերացում կարելի է կազմել ազգային եկամտի բացարձակ աճի մասին եղած տվյալներից։ Պաշտոնական տվյալների համաձայն, 1958 թվականին ազգային եկամուտը կազմեց 15455 մլն. թ. լ. 1950 թվականի 9088 մլն. թ. լ. դիմաց, իսկ ազգաբնակչության մեկ շնչին ընկնող միջին եկամուտը՝ 552 թ. լ. 440 թ. լ. դիմաց 1948 թվականի գներով[29]։ Թե մեկ շնչին ընկնող միջին եկամտի տվյալների թիկունքում կառավարող շրջանները ինչպես են թաքցնում իրենց հարստացումը, երևում է այն փաստից, որ 1958 թվականի ազգային եկամտի երեք քառորդը բաժին ընկավ նրանց[30]։ Շահագործող դասակարգերի հարստացման մասին են վկայում նաև տվյալները բանկերի թվի, նրանց ավանդների ու շահույթների գումարի և միլիոնատերերի թվի ավելացման մասին։ Այսպես օրինակ, հիմնվեցին նոր բանկեր՝ Ռա բանկ, Փամուկ բանկ, էքսպրեսս, էսնաֆկրեդի, Բուղդայ, Ստամբուլ, Դեմիր, Վակուֆ և ուրիշ բանկեր։ Բացվեցին նաև հին ու նոր հիմնված բանկերի ավելի քան 100 բաժանմունքներ երկրի տարբեր մասերում։ Ավելացավ նաև բանկային ավանդների գումարը, որը 1957 թվականին կազմեց 5331 մլն. թ. լ. 1949 թվականի 990 մլն. թ. լ. դիմաց։ Մեկ ուրիշ աղբյուրի համաձայն, 1957 թվականին բանկային ավանդների գումարը կազմեց 6 մլրդ. թ. լ. 1947 թվականի 702,8 մլն. թ. լ. դիմաց։ Թուրքական մասնավոր կապիտալի գլխավոր բանկի՝ Բշբանկասրի ավանդների գումարը 1957 թվականին կազմեց 1 մլրդ. թ. լ. 1950 թվականի 282,5 մլն. թ. լ. դիմաց[31] կամ ավելացավ մոտ չորս անգամ։ Ինչ վերաբերում է բանկերի շահույթների աճին, ապա ուսումնասիրվող ժամանակաշրջանում այն ուներ հետևյալ պատկերը։ Այսպես օրինակ, 1955 թվականին Սումերբանկը ստացավ 79,6 մլն. թ. լ., իսկ էթիբանկը՝ 49,7 մլն. թ. լ. շահույթ։ 1956 թվականի ընթացքում մեկ ուրիշ խոշոր թուրքական բանկ՝ Մերկեզբանկասը, ստացավ 63,3 մլն. թ. լիրա շահույթ և այլն։ Ավելացավ նաև միլիոնատերերի թիվը։ Այն մարդկանց թիվը, որոնց տարեկան շահույթները կազմեցին ավելի քան մեկ միլիոն լիրա, 1959 թվականին հասավ 86-ի, իսկ 500 հազար լիրայից մինչև մեկ միլիոն լիրա տարեկան շահույթ ստացողների թիվը՝ 227-ի։

Թուրքական, արևմտաեվրոպական ու ամերիկյան տնտեսագետները երկրի ֆինանսական ու տնտեսական ծանր կացության գլխավոր պատճառը տեսնում էին արդյունաբերական և ուրիշ ձեռնարկությունների շինարարության սխալ աշխարհագրական տեղաբաշխման մեջ։ Այդպիսի կարծիք էին հայտնում բուրժուական ընդդիմադիր պարտիաներն ու մամուլի նրանց օրգանները[32]։ Այնուհետև, ըստ թուրք տնտեսագետ Էրբիլի վկայության, ամերիկյան տնտեսագետները այն կարծիքը հայտնեցին, որ երկրի տնտեսական ու ֆինանսական ծանր վիճակի պատճառը կայանում է տնտեսական գործիմացության բա-

[29] „Ulus", 1960, 18 haziran.
[30] „Ulus", 1960, 23 şubat.
[31] „Ekonomi gazetesi", 1957, 12 şubat.
[32] „Görüşümüz" (Hürriyet partisi meclis grubu), Ankara, 1957, s. 30.

ցակայության մեջ[33], այսինքն կրկնում էին վերոհիշյալ փաստարկումը։ Անգլիական «Էկոնոմիստ» հանդեսը ևս գտնում էր, որ տնտեսական ու ֆինանսական այդ ծանր վիճակի պատճառը նորից արդյունաբերական ձեռնարկությունների լրիվ անպլանային շինարարությունն էր[34]։

Մարքսը և Էնգելսը վաղուց են բացահայտել ռազմականացման քաղաքականության վնասակար հետևանքները էկոնոմիկայի վրա և հերքել վերոհիշյալ կարծիքների ամբողջ սնանկությունը։ Նրանք նշել են, որ անմիջական տնտեսական տեսակետից վերցրած, պատերազմի համար կատարվող ծախսերը ոչ այլ ինչ են, «քան եթե աղքը ջուրը գցեր իր կապիտալի մի մասը»[85]։ Մարքսի և Էնգելսի այս կարծիքը իր հետագա զարգացումն է գտել ՍՄԿՊ-ի ծրագրի մեջ, ուր ասվում է հետևյալը՝ որ «միլիտարիզմը հանգեցնում է ազգերի հյուծման, հարկերի բեռի տակ հեծող ժողովուրդների քայքայման, աճող ինֆլյացիայի և թանկության»[36]։

Վերևում նշեցինք, որ 1960 թվականի մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցավ զինվորական հեղաշրջում։ Բայց քանի որ այն չուներ ոչ սոցիալական և ոչ էլ հակաիմպերիալիստական բնույթ, այդ իսկ պատճառով թուրքական նոր կառավարողների քաղաքականությունը երկրի ռազմականացման հարցում մնաց նույնը։ Բեռ ավելին, 1961 և 1962 թվականների ընթացքում ավելացան ռազմական ուղղակի ծախսերը, համապատասխանորեն կազմելով 2 մլրդ. և մոտ 2,5 մլրդ. թ. լ.։ Ավելացան նաև անուղղակի և թաքնված ռազմական ծախսերը։ Եվ քանի որ թուրքական նոր կառավարողները շարունակում են երկրի ռազմականացման այդ չարիքաբեր քաղաքականությունը, ապա հաղիվ թե նրանց մշակած միջոցառումները տնտեսության ու ֆինանսների կայունացման ուղղությամբ տան այն արդյունքները, որ նրանք սպասում են։ Թուրքական նոր կառավարողները իզուր են ունկնդրում այն «հեղինակություններին», որոնք գտնում են, որ տնտեսական ու ֆինանսական ծանր դրության գլխավոր պատճառը կապիտալ ներդրումների սխալ տեղաբաշխման մեջ է և ձգտում են պլանավորում մտցնել արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության հարցում և կազմել տնտեսական զարգացման 5-ամյա պլան[37]։ Կապիտալիստական արտադրաեղանակի անարխիայի, տնտեսության ռազմականացման պայմաններում կապիտալ ներդրումների պլանավորումը և տնտեսական զարգացման պլանները չեն կարող հաղթահարել տնտեսական ու ֆինանսական ճգնաժամը։

Թուրքիայի այժմյան տնտեսական ու ֆինանսական ծանր վիճակից դուրս գալու միակ ճիշտ ուղին կայանում է նրանում, որ թուրքական նոր կառավարողները չհետևեն Բայար-Մենդերեսի ագրադավաճան կրիկի քաղաքականությանը, ետ դառնան երկրի ռազմականացման ճանապարհից ու վարեն ընդհանուր խաղաղության պահպանման ու ամրապնդման քաղաքականություն, որը համապատասխանում է թուրք ժողովրդի անկախության շահերին։

---

[33] H. N. Erbil, „Havat pahaliligi azaltabilir mi?", istanbul, 1953, s. 6.

[34] „Economist", 1958, 22 november», p. 706.

[35] «Архив Маркса и Энгельса», т. IV, стр. 29

[36] «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ծրագիրը», Հայպետհրատ, 1961 թ., էջ 34։

[37] „Forum", 1962, 15 agustos, s. 3.